ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակում №014/GArm/20_4.3_034/06.12.19 ծածկագրով իրականացված «Արդյունաբերական և կենցաղային գազահաշվիչների պահեստամասերի ձեռքբերման» բաց առաջարկների հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2020

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ:

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Արդյունաբերական և կենցաղային գազահաշվիչների պահեստամասերի ձեռքբերման» բաց առաջարկների հարցում

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 2019 թվականի գնումների պլանի հիման վրա և համաձայն 2019 թվականի դեկտեմբերի 6-ի №014/GArm/20_4.3_034/06.12.19 ծածկագրով բաց առաջարկների հարցման հանձնաժողովի որոշմամբ հաստատված հրավերի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին բաց առաջարկների հարցումով հայտարարել է «MKM և BK տիպի արդյունաբերական և կենցաղային գազահաշվիչների պահեստամասերի ձեռքբերման» մրցույթ: Մրցութային հայտերի ներկայացման ժամկետը սահմանվել է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 18-ը, ապրանքների մատակարարման առավելագույն ժամկետը՝ մինչև 2020 թվականի 2-րդ եռամսյակը, պայմանագրի առավելագույն գինը՝ 80,4 մլն ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

Մրցույթի անցկացման նպատակով 2019 թվականի դեկտեմբերի 6-ին Ընկերությունը «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում՝ www.procurement.am (Տեղեկագիր) և իր պաշտոնական կայքում հրապարակել է մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը և հրավերը:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 1 մասնակից՝ Neotec Gmbh-ն, որի կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն է.

№	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի առավելագույն արժեք ՀՀ դրամ	Ընդհանուր առավելագույն արժեքը ՀՀ դրամ	Մասնակցի կողմից առաջարկվող արժեք Եվրո	Մասնակցի կողմից առաջարկվող Ընդհանուր արժեք Եվրո
	1	2	3	4	5	6	7
MKM պահեստամասեր							
1	Խցան կնիք սև	հատ	95000	65.448	6217560	0.10	9500
2	Անիվ փոխարինովի թմբուկի Z36	հատ	35000	71.988	2519580	0.11	3850
3	Անիվ փոխարինովի միջին Z42	հատ	35000	45.816	1603560	0.07	2450
4	Անիվ փոխարինովի աջ Z30	հատ	35000	39.264	1374240	0,06	2100
5	Այծիկ	հատ	500	248.676	124338	0,38	190

6	Դարձյակով ատամնանիվ	հատ	500	111.252	55626	0,17	85
BK-G4 պահեստամասեր							
1	Համրման սարքի Z6	հատ	20000	1714.596	34291920	2,62	52400
2	Թվատախտակ Z3	հատ	400	2277.6	911040	3,49	1396
3	Թվատախտակ Z6	հատ	20000	242.136	4842720	0,37	7400
4	**Հ/ս կարգավորող ատամնանիվ**						
	P47/59	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P27/34	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P38/48	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P30/38	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P26/46	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P24/31	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P33/42	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P32/40	հատ	4000	71.988	287952	0,11	110
	P36/46	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P37/46	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P28/36	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P32/41	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P38/49	հատ	1000	71.988	71988	0,11	110
	P38/47	հատ	1000	71.988	71988	0,11	110
5	**Գ/Հ կարգավորող ատամնանիվ**						
	P59/47	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P34/27	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P48/38	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P38/30	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P46/26	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P31/24	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P42/33	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P40/32	հատ	4000	85.068	340272	0,13	130
	P46/36	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P46/37	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P36/28	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P41/32	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P49/38	հատ	1000	85.068	85068	0,13	130
	P47/38	հատ	1000	85.068	85068	0,13	130
6	Հերմետիկ մածիկ Sikaflex-221(տյուբիկ 300մլ) կամ համարժեք	հատ	2220	6767.544	15 023 947.68	10,37	23021,40
7	Օղագոտի BK-G4	հատ	40000	582.432	23 297 280	0,89	35600
BK-G6							
1	Ապակի Z4	հատ	1000	117.792	117 792	1,67	1670
2	Թվատախտակ Z4	հատ	1000	1092.888	1 092 888	0,18	180
	Ընդամենը				80 402 186.4		143 922,40

	ԱԱՀ 20	160 80 437.28		
	Տեղափոխման առավելագույն ածեքը			5800
Ընդամենը		**96 482 623.68**	**149 722,40**	

Մասնակցի հայտը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել է մրցութային պայմաններին բավարար:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 2019 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի №2 արձանագրությամբ հաղթող է ճանաչել Neotec Gmbh-ին՝ որպես բավարար գնահատված բաց առաջարկների հարցման հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Հաղթողի ընտրությունը կատարվել է հաղթողի ընտրության գնահատման աղյուսակի հիման վրա՝ յոթ չափանիշներով՝ սահմանված կարգին համապատասխան հայտի կազմում և ներկայացում, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերի առկայություն, տեխնիկական համապատասխանություն, ընդհանուր արժեք, մասնագիտական գործունեության համապատասխանություն, նախորդ 3 տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալ, ֆինանսական միջոցների առկայություն:

Ընկերության և Neotec Gmbh-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 27-ին կնքվել է պայմանագիր՝ 149 722,4 եվրո՝ առանց ԱԱՀ, արժեքով: Պայմանագրի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է պայմանագրի կնքումից 120 օրացուցային օրվա ընթացքում:

№014/GArm/20_4.3_034/06.12.19 ծածկագրով իրականացված «ՄԿՄ և ԲԿ տիպի արդյունաբերական և կենցաղային գազահաշվիչների պահեստամասերի ձեռքբեր-ման» բաց առաջարկների հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. 2019 թվականի դեկտեմբերի 6-ին Ընկերությունը Տեղեկագրում և իր պաշտոնական կայքում հրապարակել է մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը և հրավերը, որը 2019 թվականի դեկտեմբերի 11-ին ենթարկվել է փոփոխության: Հայտերի ներկայացման համար տրվել է 9 աշխատանքային օր: Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը Տեղեկագրում և Ընկերության պաշտոնական կայքում ևս հրապարակված է:

2. Ընկերությունը գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկայի բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
3. Նախքան մրցույթի հայտարարումը, Ընկերությունը 3 ընկերությունների, ներառյալ՝ հաղթող ընկերության, շրջանակում կատարել է գնային առաջարկների հարցում, որոնց պատասխաններից միայն հաղթող ընկերության առաջարկն է ամբողջական:
4. Բաց առաջարկների հարցմանը մասնակցել է մեկ մասնակից: Հարկ է նշել, որ գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մասնակիցներ ներգրավելու ուղղությամբ և չսահմանափակվել մրցույթներն Ընկերության պաշտոնական կայքում և Տեղեկագրում հրապարակելով, այլև մասնակցության հրավերներ ուղարկել և տեղեկացնել բոլոր հնարավոր մասնակիցներին: Մրցույթի մասին իրազեկվածության ապահովման նպատակով անհրաժեշտ է նաև գնման հայտարարությունը հրապարակել անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:
5. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող մասնակիցը:
6. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:
7. Պայմանագիրը կատարման ընթացքում է:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գնման անվանումը «MKM և BK տիպի արդյունաբերական և կենցաղային գազահաշվիչների պահեստամասերի ձեռքբերում»

Գնման ծածկագիրը №014/GArm/20_4.3_034/06.12.19

Գնման ձևը Բաց առաջարկների հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	
8	Գնումն օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	
9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐	
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը	☑	☐	☐	
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐	

12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
13	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	Հայտ ներկայացրել է մեկ մասնակից:
14	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	
15	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☑	☐	☐	
16	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
18	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☐	☐	☑	Պայմանագիրը կատարման ընթացքում է:
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☑	☐	☐	